

Տեղեկատվություն

ՀՀ մարզերի և ԱՊՀ անդամ պետությունների վարչատարածքային միավորների միջև
համագործակցության վերաբերյալ

Թիվ	Համագործակցություն	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1.	Արագածոտնի մարզի Օշական համայնքի մշակույթի տան Անժելա Շահնաբաթյանի անվան պարային համույթի մասնակցությունը Թուրքմենիայի Թուրքմենբաշի քաղաքում կայացած „Ավազա,, մանկապատանեկան միջազգային փառատոնին:	3-13 օգոստոս, 2014թ.	Արագածոտնի մարզի Օշականի Անժելա Շահնաբաթյանի անվան պարային համույթը Թուրքմենստանի Թուրքմենբաշի քաղաքում մասնակցել է „Ավազա,, մանկապատանեկան միջազգային փառատոնին: Պատվիրակությունը բաղկացած է եղել 17 անդամից, որը ղեկավարել է փոխմարզպետ Նունե Մովսիսյանը: Փառատոնի շրջանակում հայտարարված բոլոր մրցույթներին պատվիրակությունը ունեցել է ակտիվ մասնակցություն և լավագույնս ներկայացրել հայկական ազգային պարը: Կազմակերպվել է նաև այլ ոլորտային մրցույթներ՝ նկարչության, շարադրության, մարզական, որոնցում Օշականի պարախումբը գրավեցել է 1-ին տեղը:

2.	<p>ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի այցը ՌԴ Յակուտիայի երկրամաս:</p>	<p>6-7 սեպտեմբերի, 2014թ.</p>	<p>ՌԴ Յակուտիայի երկրամասի հայկական համայնքի հրավերով մարզպետ Սարգիս Սահակյանը այցելել է ՌԴ Յակուտիայի երկրամաս: Կայացել է մարզպետի հանդիպումը հայ համայնքի հետ, քննարկվել են համատեղ իրականացվելիք հարցեր: Յակուտսկ քաղաքում մարզպետը մասնակցել է Սուրբ Կարապետ եկեղեցու բացման արարողությանը: Եկեղեցին կառուցվել է Յակուտսկ քաղաքի բնակիչ, ծնունդով Արագածոտնի մարզի Դիան գյուղից, բարերար Խորեն Սահակյանի հովանավորությամբ: Կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել զարգացնել համատեղ գործակցությունը, տնտեսական, մշակութային ոլորտներում:</p>
3	<p>«Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական երրորդ փառատոնի կազմակերպում:</p>	<p>Սեպտեմբեր-դեկտեմբեր, 2014թ.</p>	<p>Ռուսաստանի հայերի միության և Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնի նախաձեռնությամբ մարզի հանրակրթական դպրոցներում անց է կացվում «Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական երրորդ փառատոնը: Այն կազմակերպվում է 3 փուլով՝ տարածքային, մարզային և հանրապետական: Ծրագրի շրջանակում կազմակերպվում են ռուսական պոեզիայի երեկոներ, գրական-երաժշտական կոմպոզիցիաներ, ռուսաց</p>

			<p>լեզվի բաց դասեր, լեզվի վարպետության դասեր և ռուսական երգի լավագույն կատարման մրցույթ:</p>
--	--	--	--